

Հնարհավոր Լեւոնուհ Լ Սոփի Ծնունդ



Պարույր ՍԵՎԱԿ

ԴԻՄՈՒՄ ԵՄ
ՊԱՇՏՊԱՆՈՒ
ՊԵՍ

Պո՛ւ, որ գալիս ես մեր մանուկների արդար
պահանջով,
Իբրև պատասխան նրանց սրտփուն ակնկալիքի.
Պո՛ւ, որ գալիս ես մրսկան արտերի դողողուն
կանչով,

Իբրև պատասխան նրանց կարիքի.
Պո՛ւ, որ ունենիր խնդել ես դեռ անցյալի ցանցով,
Մինչդեռ ծեռքերդ մեկնել ես արդեն կանչող գալիքին,
Արի՛, Նո՛ր տարի,
Գալուստդ բարի՛:
Արի՛, Նո՛ր տարի,
Բայց... այնպե՛ս արի,
Որ ատոմական այս ահեղ դարի
Գոռ ժամացույցը ինքն իրեն լարի
Մայրացած հարսի սրտատերուփի համաչափությամբ,
Եվ նրա անտես սլաքները զույգ
Իրենց վիրավոր թևափությամբ
Ոչ թե մեզ կրկին
Քարանձավների անաչ խոռոչը մատնացույց անեն,
Այլ Տիեզերքի անկոխ դաշտերին
Մեր զույգ աչքերի հայացքը տանեն...
Արի՛, Նո՛ր տարի,
Բայց... այնպե՛ս արի,
Որ ավելանա աշխարհի բարին,
Եվ այդ աշխարհի բախտի վրայով
Խնդրեն ձգված մետաղալարին
Լարախաղացի ծպտված տեսքով Չարը չպարի՝
Ողջ մարդկությանը դնելով ծանոթ ծաղրածուի տեղ...

Անձրևի տեսքով,
Չյան կերպարանքով
Այդ դու ես գալիս:
Արի՛, Նո՛ր տարի,
Գալուստդ բարի՛:
Բայց... այնպե՛ս արի,
Որ անձրևը հորդ սրբելով տանի
Ոչ միայն կեղտը հոգնած մայրերի,
Այլ նաև փոշին ու մուրը հոգու,
Այլև խավար խոտի ու խարդախ խոկուն,
Եվ ծյունը իջնի որոգայթների՝
Ծանր ամոթից շիկնած այտերի՝,
Ուրացումներից դեղնած-ժանգոտած
սրտերի՝ վրա

Եվ իր այդ ճերմակ բարությամբ շռայլ
Մարդուն մարդու դեմ պարզերե՛ս անի...
Արի՛, Նո՛ր տարի,
Բայց... այնպե՛ս արի,
Եվ ոչ թե այնպե՛ս, որ ծյունը ճերմակ
Դառնա վարակի սավան ու վերմակ,
Եվ որ ամբի ջուրն աստվածածին
Մարդու արյունը ջրի վերածի,
Ու ճառագայթը, ճառագայթն
անբիծ

Սկզբնական իբրև մի ահեղ ու պիղծ
Նոր հիվանդության դիվային
անուն,

Որից մինչև իսկ մահն է
մահանում...

Արի՛, Նո՛ր տարի,
Գալուստդ բարի՛,
Եվ արթնացրո՛ւ քո թնդուն
բայթով

Ուշ մնացածին,
Քնով տարվածին.
Տո՛ւր ապաքինում հոգով
ցավածին,

Հիասթափվածին՝ նոր մի հիացում,
Սիրասթափվածին՝ մի նոր միացում.
Զեռքից հավատը փախուստ տվածին,
Իբրև Նոր տարվա բաղձալի նվեր,
Տո՛ւր նոր հավատի կապակուռ թևեր,
Մանկանը մեծի մտքի լիացում,
Մեծին մանուկի անարատություն,
Տափարակներին՝ Արարատություն,
Իսկ երկրագնդին՝ մի առատություն,
Որ նրա վրա Քաղցը այսուհետ
Չունենա ոչ մի կայսրություն ու գահ,
Ու Սարսափն իրեն թագակիր չզգա,
Որ Ազատությունն իր բառե զունեղ շապիկը ճեղքած
Տրվի ճախրանքի,

Ու Մարդն ազատվի իր հին գերության նոր
հաճախանքից,

Ու Մարդն այսուհետ ոչ մի տեղ երբեք
չգունավորվի,

Եվ որ այլևս ոչ մի ժողովուրդ,
Ոչ մի ազգ ու ցեղ

Պատմության քափից ու սև մրուրից
չթունավորվի,

Դառնա լիազոր, դառնա լիիրավ,
Ու մենք, վերջապե՛ս, հասկանանք իրար,
Ամենքըս, բա՛վ է, հասկանանք իրար:

Նաև հասկանանք,
Որ մեր իսկ արյան գնդիկը մանրը
Այս երկիր կոչված գնդից ավելի

մեծ է ու ծանր...



Բարձր պարգևներ գիտության և կրթության բնագավառում ունեցած մեծ վաստակի համար

Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձի առթիվ գիտության, կրթության բնագավառներում ունեցած մեծ վաստակի, երկարամյա և արդյունավետ գիտամանկավարժական գործունեության համար ՀՀ ԳԱԱ վաստակաշատ մի խումբ գիտնականներ արժանացել են պետական պարգևների և վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Այդ առթիվ ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցած հանդիսավոր արարողության ժամանակ գիտնականներին շնորհավորեցին ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Անանիա Շիրակացու մեդալի է արժանացել ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի գլխավոր գիտաշխատող Արթուր Նիկողոսյանը: Սովսես Խորենացու մեդալի են արժանացել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի բաժնի վարիչ Գևորգ Գյուրգյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Յովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Վլադիմիր Ղազարյանը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը:

Գիտության վաստակավոր գործչի կոչման են արժանացել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մեքենագիտության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Մարգարյանը, ՀՀ ԳԱԱ Հ. Բուհիայանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Արմեն Սիմոնյանը:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն



Նոյեմբերի 22-ից 25-ը երևանում անցկացվեց ԱՊՀ երկրների երիտասարդ աստղագետների կոնֆերանսը: Այն կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի, Հայկական աստղագիտական ընկերության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից և կրում էր «Տիեզերական դարաշրջանի 50 տարին. երկնքի իրական և վիրտուալ ուսումնասիրություններ» խորագիրը: Կոնֆերանսի աջակից էր ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամը: Կոնֆերանսին մասնակցում էին Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի և Տաջիկստանի 50 ուսանողներ և երիտասարդ գիտնականներ, ինչպես նաև եվրոպացի, ռուս և հայ դասախոսներ, այդ թվում նաև եվրասիական աստղագիտական ընկերության համամիջազգային և Ն. Ս. Սամուել: Կոնֆերանսի ընթացքում հրավիրված մասնագետներ

ԱՊՀ երկրների երիտասարդ աստղագետների կոնֆերանսը երևանում

րի կողմից կարգացվեց 4 հրավիրված դասախոսություն, լսվեց ուսանողների 38 զեկուցում, անցկացվեց գործնական 2 պարապմունք, կազմակերպվեցին այցելություններ Բյուրականի աստղադիտարան և Հայաստանի տեսարժան վայրեր:

ԱՊՀ երկրների երիտասարդ գիտնականների կոնֆերանսի պաշտոնական բացումը կայացել է Նոյեմբերի 22-ին երևանում, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի փոքր դահլիճում: Բացման արարողությանը ներկա էին և ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպանի խորհրդական և Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցչության ղեկավար Վիկտոր Կրիվոպոլսկովը, Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Իվան Կուխտան, Եվրասիական աստղագիտական ընկերության նախագահ Նիկոլայ Ամուսը և Հայկական աստղագիտական ընկերության համամիջազգային և կոնֆերանսի կազմկոմիտեի նախագահ Արեգ Միքայելյանը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

UNESCO-ի փիլիսոփայության համաշխարհային օրը

2002 թ.-ից սկսած՝ UNESCO-ի որոշմամբ ամբողջ աշխարհում ընթացիկ տարվա Նոյեմբերի երրորդ հինգշաբթի 21-ը նույն փիլիսոփայության համաշխարհային օրը: Այս տարի այդ կապակցությամբ Նոյեմբերի 17-ին ՀՀ ԳԱԱ-ում կայացել էր հանրապետական գիտաժողով, որին մասնակցում էին հայտնի գիտնականներ ինչպես Ս. Շիրակյան, Դ. Բուհիայան, Կ. Կարգից, այնպես էլ երևանի մի շարք բուհերից:

Գիտաժողովի ընթացքում գիտական զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոսներ, գիտության դոկտորներ, մագիստրներ, ինչպես նաև տեղի ունեցան լայնածավալ քննարկումներ արդի փիլիսոփայական հարցերի շուրջ: Գիտաժողովի հիմնական զեկուցումների սողովածուն արդեն հանձնված է տպագրության:



ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Կայացավ «Հայկական վիրտուալ գիտական գրադարան» ծրագրի շնորհանդեսը

Նոյեմբերի 29-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում (Քաղաքային 24, 2-րդ հարկ) տեղի ունեցավ «Հայկական վիրտուալ գիտական գրադարան» ծրագրի շնորհանդեսը: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆերնը, CRDF Global-ի և Thomson Reuter գործակալության ներկայացուցիչներ:

«Հայկական վիրտուալ գիտական գրադարան»-ը Հայաստանի գիտնականներին եզակի հնարավորություն կընձեռի առցանց ամսագրեր և շտեմարաններ մուտք ունենալու համար: Այն ներառում է բաց մատչելիության սկզբունքով հրատարակված ավելի քան 3 միլիոն հոդված, ԱՄԿ-ի Research4Life ծրագրի ավելի քան 8 հազար ամսագիր:

Այս միջոցառման իրականացրել է ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանը՝ «Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամ Գլոբալ»-ի (CRDF Global) հետ համատեղ:

Հ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան Հայսեյմսի և կառույցների պահպանության գիտահետազոտական ինստիտուտը ԳԱԱ-ի համակարգ փեդափոխելու առաջարկով դիմում է կառավարությանը

ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստում որոշվեց դիմել ՀՀ կառավարությանը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության համակարգում գտնվող Հայսեյմսի և կառույցների պահպանության գիտահետազոտական ինստիտուտը պետական մասնաբաժնով ՀՀ ԳԱԱ համակարգ տեղափոխելու և ինստիտուտի հիմքի վրա Սեյմսակայուն շինարարության գիտահետազոտական և փորձարարական ստորուկտորական հանրապետական կենտրոն ստեղծելու առաջարկով: Նպատակն է ստեղծել սեյսմակայուն շինարարության միջազգային մակարդակի գիտական հետազոտական կենտրոն, որը կզբաղվի ոլորտի հիմնախնդիրների հետազոտություններով՝ համագործակցելով համապատասխան մասնագիտացված կառույցների և կազմակերպությունների հետ:

Հարցի բննարկումը սկսվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Խաչիյանի ղեկավարությամբ: Ելույթներ ունեցան ՀՀ

ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Բորիս Կարապետյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սևակ Հովհաննիսյանը, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դարբինյանը, Սեյմսակայուն շինարարության հայկական ասոցիացիայի նախագահ Միքայել Մելքունյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը, «Հայնախագիծ» ընկերության տնօրեն Գրիգոր Ազիզյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության պետ Հրաչյա Պետրոսյանը, Սեյմսակայուն շինությունների կենտրոնի պետ Ջավեն Խլաթյանը:

Ելույթ ունեցողները կարևորեցին, որ ներկայումս հանրապետությունում ոչ մի գիտական կամ ուսումնական հաստատությունում կառուցվածքների սեյսմակայունության և սեյսմակայուն շինարարության բնագավառում հիմնարար, փորձարարական, նպատակային, ծրագրավորված գիտական լայն ծավալի հետազոտություններ չեն իրականացվում: Եվ սա տեղի է ունենում հանրապետությունում մոր թափ ստացած շինարարության և, հատկապես, բարձրահարկ շենքերի շինարարության ծավալների աճի, ճանապարհաշինության, ջրային տնտեսության, հիդրոտեխնիկական և էներգետիկական համակարգերի մոր ոչ ավանդական օբյեկտների նախագծման ու շինարարության պայմաններում: Ահա՛ սրանով է պայմանավորված կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Ակադեմիական Նոր հրատարակություններ

1. «Նշան Մուրադյան. մարդը, գրականագետը, իմաստասերը»:
2. Հ. Քոչարյան - Բարդ դատողությունների միջև տրամաբանական հարաբերությունները և դրանց ձևական ներկայացումը:
3. Լ. Հովհաննիսյան - Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի բնություն (II մաս):
4. «Անհիմն միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ:
5. Հեղ. Կոլեկտիվ - «Օտար աղբյուրները Անհի մասին (X-XIX դդ.)»:
6. Հ. Ավագյան - Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում:
7. Ա. Հովսեփյան, Ա. Հովհաննիսյան - Քաղաքագիտության հիմունքներ:
8. Мартин - Анна (Книжная история города и раскопки на месте городища):
9. Գ. Շաղոյան - «Յոթ օր, յոթ գիշեր. Հայոց հարսանիքի համայնապատկեր»:
10. Հեղ. Կոլեկտիվ - Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիրք 2:
11. Յու. Սուվարյան, Վ. Հարությունյան, Վ. Սարգսյան, Վ. Խաչատրյան - Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը:
12. А. Карапетян „Автопортрет армян: этничность в самооценках“:

Միջֆակուլտետային ցուցահանդես ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում

Դեկտեմբերի 1-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում կազմակերպվել էր ցուցահանդես՝ «Հայաստանը մենք ենք. Իմ զենքն է» խորագրով: Ցուցահանդեսի մասնակիցներն էին կենտրոնի մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողները՝ 11 ֆակուլտետներից: Ցուցահանդեսին պատրաստվել էին ոչ միայն մասնագիտական ուղղվածությամբ առաջնորդվելով, այլև առաջնահերթությունը տվել էին Հայաստանի՝ իրենց ընկալման յուրահատկություններին: Հոգեբանության ֆակուլտետի ուսանողները ներկայացել էին հոգեբանական թեմատիկ թեստերով և հետաքրքիր պատկերներով, մինչդեռ լրագրության ֆակուլտետի ներկայացուցիչներն առաջարկել էին լուսանկարների միջոցով զանազանել իրենց համար ցանկալի և ոչ ցանկալի Հայաստանը: Իրավաբանության ֆակուլտետի ներկայացուցիչներն էլ նախապատվությունը տվել էին հայկական ավանդական խոհանոցին: Օրվա թեմատիկային համապատասխան դեղագործական քիմիայի բաժինը պատրաստվել էր այս ցուցահանդեսին՝ ներկայացնելով խորհրդատվություն ՉԻԱՀ-ի մասին: Ի դեպ, հենց այս ֆակուլտետի տաղավարն արժանացավ «Լավագույն տաղավար»-ի կոչմանը և ստացավ համապատասխան զավարձ: Հոգեբանության, իրավաբանության և լրագրության ֆակուլտետների ներկայացուցիչները ստացան «Լավագույն սուր միտք» մրցանակները, իսկ մնացած բոլոր մասնակիցներն էլ ստացան խրախուսական մրցանակներ: Հուսով ենք, որ այս նախագիծը շարունակական բնույթ կունենա, և ՀՀ ԳԱԱ մագիստրանտներն ամեն տարի հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց հայրենիքը, նրա յուրահատկություններն ու խնդիրներն իրենց աչքերով:

Երկրի նման մոլորակ

Ամերիկյան օդատիեզերական գործակալության՝ NASA-ի գիտնականները հայտնաբերել են երկիրը հիշեցնող մոլորակ: Մեզանից 600 լուսատարի հեռավորության վրա գտնվող այդ երկնային մարմինը հաջողվել է տեսնել «Կեպլեր» աստղադիտակի միջոցով: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ նորահայտ մոլորակը մոտավորապես երկուսուկես անգամ մեծ է երկրից, ունի իր Արեգակը, որի շնորհիվ միջին ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի 22 աստիճան տաքություն է: Բայց գիտնականների կարծիքով գլխավորն այն է, որ նորահայտ մոլորակի վրա կարող է լինել ջուր, հետևաբար մաս կյանք: Հետազոտությունները շարունակվում են:

Աստղագետների հաշվարկների համաձայն, ընդհանուր առմամբ գոյություն ունի կյանքի համար պիտանի հինգ տասնյակ մոլորակ:

2 միլիարդ 300 միլիոն յեն՝ Չինական պարիսպը վերանորոգելու համար

Չինաստանը պետական բյուջեից 2.03 միլիարդ յեն է հատկացրել Չինական Մեծ պարսպի արևմտյան հատվածը վերանորոգելու համար: Նախագիծը նախատեսում է վերանորոգել Ցզյուլայ դարպասի շրջանում գտնվող պատը, որտեղից սկիզբ է առնում Մեծ պարիսպը: Չինական Մեծ պարիսպը կառուցվել է Մին արքայատոհմի կողմից (1368-1644 թթ.): Վերանորոգման ծրագրի շրջանակներում կառուցվելու է թեմատիկ այգի և պատի վիճակը ստուգող կենտրոն: Ի դեպ, Ցզյուլայի դարպասը, որը 1987 թվականից մտել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ժառանգության ցուցակում, կառուցվել է 1372 թվականին և կարևոր նշանակություն է ունեցել միջնադարյան Սետաբս ճանապարհի համար:



ՀՀ ԳԱԱ-ի «Electronic Journal of Natural Sciences» գիտական ամսագիրը կարդում են աշխարհի ավելի քան 100 երկրներում

ՀՀ ԳԱԱ-ի «Electronic Journal of Natural Sciences» գիտական ամսագիրը (<http://www.epnet.com>), որը լույս է տեսնում ամերիկյան EBSCO հրատարակչության հետ համատեղ աշխատանքի արդյունքում, կարդում են աշխարհի ավելի քան 100 երկրներում: Ամսագիրը հրատարակվում է 2003 թ.-ից անգլերեն լեզվով՝ տարեկան 2 համարով, ամեն համարում 10-12 հոդված: Ամսագրի առավել կարգազվող հոդվածները վերաբերում են հետևյալ գիտական ուղղություններին՝ համակարգչային դիմաձևի մոդելավորում, շրջակա միջավայրի մասին գիտություններ և կենսաբանական գիտություններ, կենսատեխնոլոգիա, օրգանական միացությունների սինթեզ և հատկությունների ուսումնասիրում, կենսաքիմիա, մոլեկուլային կենսաբանություն, տեսական կենսաֆիզիկա: Ինչպես նշում է ամսագրի գլխավոր խմբագիր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Շահինյանը, ամսագիրն ունեցել է ավելի քան 6000 ընթերցող, որոնցից մոտ 65 %-ը՝ ԱՄՆ-ից:



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

Անդրեյ Ալեքսանդրովիչ Գոնչար



Անդրեյ Ալեքսանդրովիչ Գոնչարը ծնվել է 1931 թ. նոյեմբերի 21-ին, Սանկտ Պետերբուրգում: Հայրը՝ Ալեքսանդր Գոնչարը, ռազմական տեխնիկայի ոլորտի հայտնի մասնագետ էր, մայրը՝ Ալիսա Խանջյանը, որը ակադեմիկոսի կոչումով պարգևատրված էր: Լենինգրադի տեխնոլոգիական ինստիտուտում: Երբ հայրը զոհ դարձավ ստալինյան ռեպրեսիաներին, ընտանիքի ողջ ծանրությունը ընկավ մոր՝ Ալիսա Խանջյանի ուսերին: 1942 թ. Լենինգրադի բլոկադայի օրերին Ալիսա Խանջյանը կարողացավ և մեծ դժվարությամբ հասնել Երևան՝ հայրական տուն: Անդրեյ Գոնչարը Երևանում ապրեց մինչև 1949 թ.: Ուսում ստացավ Չկալովի անվան դպրոցում, որտեղ փայլեց մաթեմատիկական գիտելիքներով: Ի դեպ, Անդրեյ Գոնչարի մաթեմատիկայի ուսուցիչն այն նույն Ռոստոմյանն էր, որի սանն է եղել Սերգեյ Սերգեյանը:

Դպրոցը ունեցավ ավարտելուց հետո Անդրեյ Գոնչարը մեկնում է Մոսկվա՝ շարունակելու բարձրագույն կրթությունը Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում:

1954 թ. գերազանցությամբ ավարտելով համալսարանը՝ նա դառնում է Սերգեյ Սերգեյանի ասպիրանտը: 1957 թ. Անդրեյ Գոնչարը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն Մոսկվայի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում, իսկ 1964 թվականին՝ դոկտորական ատենա-

խոսությունը՝ Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտում: Միաժամանակ նա շարունակում է մանկավարժական բեղուն գործունեությունը Մոսկվայի պետական համալսարանի ֆունկցիոնալ անալիզի և ֆունկցիաների տեսության բաժնում: 1967 թ. արժանանում է պրոֆեսորի կոչման:

Նա մշակեց Պադեի մոտարկումների տեսության ժամանակակից հիմունքները և առաջիկա շատ տարիների համար որոշեց այդ ոլորտի հետազոտությունների հիմնական ուղղությունները: Նրա կողմից երկրորդային սկզբունքային արդյունքներ ստացվեցին նաև Պադեի մոտարկումների տեսության խնդիրների հետազոտությունների բնագավառում:

Նա մշակել է ռադիոնալ մոտարկումների տեսության դասական խնդիրների լուծման սկզբունքների նոր մեթոդ:

Անդրեյ Գոնչարն ակտիվորեն զբաղվել է բազմաչափ կոմպլեքս անալիզի պրոբլեմներով: Նա ձևակերպել է մի շարք հիպոթեզներ բազմաչափ մոտարկումների և պոտենցիալների ոչ գծային տեսության

վերաբերյալ՝ խթանելով վերոհիշյալ բնագավառում ակտիվ հետազոտությունների սկիզբը:

Գոնչարի աշխատանքները շաղկապում են մաթեմատիկայի այնպիսի կարևոր բաժիններ, ինչպիսիք են՝ մոտարկումների տեսությունը, ֆունկցիաների տեսությունը, ֆունկցիոնալ անալիզը, բազմաչափ կոմպլեքս անալիզը: Նրա ստացած արդյունքների կիրառումը խթանել է և էական առաջ մղել սկզբունքորեն կարևոր մաթեմատիկական որոշ խնդիրների լուծումները, այդ թվում նաև կիրառական բնույթի:

1972 թվականից Գոնչարը ղեկավարում է Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս փոփոխական ֆունկցիաների տեսության բաժինը: 1974 թվականին Անդրեյ Գոնչարը ընտրվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1987 թ.՝ իսկական անդամ:

1988-1991 թթ. Գոնչարը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի մաթեմատիկայի բաժնաժողովի ակադեմիկոս-քարտուղարն էր: Էական եղան Գոնչարի ջանքերը, որոնց շնորհիվ Ռուսաստանի գիտությունների ակադեմիան դարձավ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իրավահաջորդը: Առանց ցնցումների կազմակերպեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (ՌԳԱ) անդամների առաջին ընտրությունը: Բարձր գնահատելով Անդրեյ Գոնչարի թե՛ գիտական մեծ տաղանդը, թե՛ կազմակերպական հզոր ծիրքը՝ 1991 թ. նրան առաջարկվեց զբաղեցնել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահի բարձր և պատասխանատու պաշտոնը: Այդ պաշտոնում նա մնաց մինչև 1998 թվականը:

Ներկայումս Գոնչարը շարունակում է աշխատել Մաթեմատիկայի ինստիտուտում՝ պահպանելով ՌԳԱ Նախագահության խորհրդականի իր կարգավիճակը:

Երկար տարիներ Գոնչարը եղել է «Математический сборник» կենտրոնա-

կան ամսագրի գլխավոր խմբագիրը, «Вестник Российской академии наук», «Наука в России» ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ է: Անդրեյ Գոնչարը ՌԳ Նախագահին կից գիտության և բարձր տեխնոլոգիաների խորհրդի, մաթեմատիկոսների ազգային կոմիտեի անդամ է: Նա հիմնադրար հետազոտությունների ռուսաստանյան գիտական հիմնադրամի ստեղծման ղեկավարներից մեկն է: Գիտության մեջ ունեցած զգալի ավանդի համար Անդրեյ Գոնչարը երկու անգամ պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, ՌԳԱ Մ. Վ. Կելդիշի անվան ոսկե մեդալով, Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակով և Դեմիդովյան ու Տրիումֆ մրցանակներով:

ՀՀ ԳԱՍ-ն, բարձր գնահատելով Անդրեյ Գոնչարի գիտական վաստակը, ինչպես նաև ակտիվ համագործակցությունը Հայաստանի հետ, 2003 թվականին նրան ընտրեց ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Այսօր էլ Անդրեյ Գոնչարը եռանդով աշխատում է ռուսական գիտության զարգացման և հարազատ ինստիտուտի համար: Մեծանուն գիտնականը միաժամանակ շարունակում է իր ազգանվեր գիտական գործունեությունը և համագործակցում է ՀՀ ԳԱՍ ինստիտուտների հետ՝ իր գիտելիքներն ի սպաս դնելով հայ գիտական մտքի զարգացմանը:

Օրերս լրացավ մեծանուն մաթեմատիկոս, ՌԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ Անդրեյ Գոնչարի 80-ամյակը: Ձերմորեն և սրտանց շնորհավորում ենք նշանավոր գիտնականին, ցանկանում քաջառողջություն, երջանկություն ու նորանոր հաջողություններ գիտական գործունեության ասպարեզում:

Գոնչար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱՍ
սփյուռքի բաժնի գիտաքարտուղար

Անիի Մայր տաճարի և Ամենափրկիչ եկեղեցու վերաբերյալ ԻԿՕՄՕՍ-ի 17-րդ Գլխավոր ասամբլեան ընդունել է բանաձև

Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ն. Սարկոզիի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ի. Բոկովայի հովանու ներքո, ինչպես նաև ԻԿՕՄՕՍ/Ֆրանսիայի հրավերով 2011 թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նստավայրում, իր 17-րդ Գլխավոր ասամբլեան գումարեց Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը՝ ԻԿՕՄՕՍ-ը:

109 երկրների 1120 պատվիրակներ լիազումար նիստերով ընթացող Գլխավոր ասամբլեայի աշխատանքներին զուգահեռ մասնակցեցին նաև «ժառանգությունը զարգացման շարժիչ» գիտաժողովին:

Գլխավոր ասամբլեան քննարկեց և ընդունեց 41 բանաձևեր, որոնք վերաբերում էին ինչպես կազմակերպական և տեսական, այնպես էլ ժառանգության պահպանության առանձին դեպքերի: «ժառանգության սպառնալիքներ» բաժնում ընդունվեց նաև ԻԿՕՄՕՍ/Հայաստանի կողմից առաջարկված բանաձևը՝ Անիի Մայր տաճարի և Ամենափրկիչ եկեղեցու վերաբերյալ: Ընդունված բանաձևը հիմնականում հետևյալ տեսքն ունի. «Նկատի ունենալով Անիի ուշագրավ ժառանգության պահպանության և պաշտպանության ուղղությամբ Անիի Մայր տաճարի և Ամենափրկիչ եկեղեցու ամրակայման և վերականգնման հրատապ միջոցների անհրաժեշտությունը՝ որոշում է դիմել ԻԿՕՄՕՍ-ի նախագահին Թուրքիայի մշակույթի և տուրիզմի նախարարության հետ, ԻԿՕՄՕՍ/Հայաստանի ու ԻԿՕՄՕՍ/Թուրքիայի, ինչպես նաև ԻԿՕՄՕՍ-ի համապատասխան գիտական կոմիտեների, WMF-ի և միջազ-



գային այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ, կազմել միջազգային մասնագետների խումբ հետևյալ նպատակով.

ա) ազգային և միջազգային կոմիտեներից, ներառյալ Հայաստանի և Թուրքիայի ազգային կոմիտեները, մասնագետների խմբի միջոցով խրախուսել պահպանության և վերականգնման պրոֆեսիոնալ պարտավորությունը՝ Անիի Մայր տաճարի և Ամենափրկիչ եկեղեցու վերականգնման աշխատանքներում (Արևելյան Անատոլիա, Թուրքիա) և

բ) այս միջազգային համագործակցության արդյունքները դարձնել մատչելի՝ որպես ժառանգության պահպանության և պաշտպանության բնագավառում համագործակցության ու փոխըմբռնման օրինակ»:

Պատրաստեց Մ. ՄԱԿԱՐՅԱՆԸ

Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն» մենագրությունը՝ կորեերեն

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն» մենագրությունը օրերս կորեերենով լույս է տեսել Հարավային Կորեայում, 500 տպաքանակով: Մենք խնդրեցինք պրոֆեսորին տեղեկացնել, թե ինչպես է այդ աշխատությունը հասել Կորեա: Պրն Հովհաննիսյանն ասաց, որ հրատարակիչները փնտրել և գտել են «Հայոց ցեղասպանություն» գրքի անգլերեն տարբերակը և այդ գրքից թարգմանել: Ի դեպ, այդ գիրքը միաժամանակ լույս է տեսել 10 լեզուներով Երևանի «Զանգակ» հրատարակչության կողմից, որի տնօրեն Սոկրատ Սկրտչյանից է պրն Հովհաննիսյանը իմացել իր մենագրության՝ կորեերենով լույս ընծայվելու մասին: Ի դեպ, այդ գրքի ֆրանսերեն տարբերակից արդեն թարգմանվել է ռումիներեն և 2012 թվականի ապրիլի 24-ի նախօրեին լույս կտեսնի Բուխարեստում:

Վերջերս Կահիրեում արաբերենով լույս է տեսել Նիկոլայ Հովհաննիսյանի «Արաբական պատմագրությունը Հայոց ցեղասպանության մասին» նոր աշխատությունը: «Հայոց ցեղասպանություն» աշխատությունը հեղինակի 33-րդ մենագրական ուսումնասիրությունն է, որն օտար լեզվով լույս է տեսնում արտասահմանում:

Մ. Մ.

Շրջանառության մեջ է մտել ջունգլիական մի տեսաֆիլմ՝ «Յարութիւն» փառակապակցությամբ: Իրար մոտ են հավաքվել փարբեր խավերի ներկայացուցիչներ՝ էլ ազգային ջոջ աղաներ, էլ միութնավորներ ու անմիտություններ, էլ գիտություններ ու գիտություններ՝ ճոճազոգ կոչումներով իրավաբան, փիլիսոփա, արվեստագետ, երգահան, լեզվաբան ու ձեռագրագետ: Նույնիսկ հանդեսին մասնակից է դարձել կանաչները ոչնչացնելուց հետո անգործ մնացած Կանաչների միության նախագահը: Մի խոսքով՝ ջունգլիների ծաղիկը, ազգի էլիտան: Բայց ինչքան էլ որոնումներ կատարեցինք այդ էլիտայի շերտերում, որ հայտնաբերենք գոնե մեկին, որը դուրս-ինչ պարկերացում ունենա հազարամյակների ճանապարհ անցած իր մայրենի լեզվի գործուն ու հիմնարար օրենքների և օրինաչափությունների մասին, այնպես էլ մնացինք թևաթափ. չկա՛ր ու չկա՛ր:

զավորության մեջ»:

Այնուամենայնիվ, բարեխղճությունը պահանջում է արձանագրել, որ այդ ներկայացման ժամանակ ցուցադրվեցին նաև անշրջանցելի ու իրական ճշմարտություններ, որոնք անտեսել չի կարելի: Նրանք շրջանառության մեջ դրեցին ազգային հարցում Լենինի ու բոլշևիկների դավադիր քաղաքականության բացահայտված իրողությունները: Նրանցից իմացանք, որ իշխանությանը տիրանալուց հետո Լենինի հրապարակած երրորդ դեկրետը լեզվի մասին է եղել, ո-

կան թվականների իրողությունները, որպեսզի ամեն ինչ թեքեն իրենց պլանավորած ուղղությամբ: Իսկ ո՞րն էր քսանականների գերագույն սպանալիքը:

Իմացանք, որ Լենինի հրապարակած երրորդ դեկրետը լեզվի մասին էր, որով պահանջվում էր անցնել լատինատառ գրության: Իշխանության հասնելու երկրորդ ամիսը դեռ չլրացած՝ Ռուսաստանի լուսժողովոստից 1917 թ. դեկտեմբերի 23-ին հրապարակում է դեկրետ նոր ուղղագրության անցնելու վերաբերյալ: Բա-րեբախտաբար, պետական դերակատա-

ՋՈՒՆԳԼԻԱԿԱՆ ԼԱՐԱՆԱՂԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՐԶԲՈՒՐԸ

Հավաքի մասնակիցները հազար ու մի մարտահրավերների դեմ կանգնած հայ ժողովրդի գլխավերևը հայտնաբերել են նաև մի նոր սպանալիք: Պարզել են, թե հայոց լեզվի շարադասությունը ոչ ավել, ոչ պակաս, ռուսաց լեզվի շարադասությունն է, որը չհաղթահարելու դեպքում պատակովելու է մեր ժողովուրդը. նրա առանձին հատվածներից գոյանալու են առանձին ժողովուրդներ: Սիա ինչ է բարբառում հայոց ջոջ աղաներից մեկը. «Ռեդ-դագրության փոփոխությունը լեզվամտա-ծողությունը փոփոխություն էր նաև: Մեր բառերը ածանցներ դարձան, մեր մոտեցումը գրելու և կարդալու պիտի նույնացվեր ռուսաց լեզվի հետ, քնական է, այսօր էլ մեր խոսակցականը, շարադասությունը ավելի շատ ռուսական շարադասություն է» (Գալուստ Սահակյան):

Հարգարժան շարքային ու մահկանացու հայ, Արմավանի խոսքերով ասած «իմ ազգի, իմ սրտի սիրելի ազգ», դու շատ հիմնովին գիտես մերօրյա ազգային ջոջ աղաներին: Ռուս բանաստեղծ Նեկրասով իր հայտնի պոեմում արձանագրել է, թե «ռուս մուժիկի գլուխը եթե մի բան մտավ, կացնով կարելի է հանել այնտեղից»: Դու լավ գիտես մեր ջոջ աղաների հոգեկերտվածքը, գիտես, որ կացինն էլ է անգոր նրանց պարագայում: Կողմնորոշվելու համար մնում է իրար կողք բերես անհամեմատելիները:

Հանրահայտ է, որ Կիևյան Ռուսիայի կործանումից հետո արևելասլավոնական բարբառներից մեկը դարձավ ռուսաց լեզվի հիմքը՝ իր հետագա կատարելագործման ու խորացման ճանապարհով, որը դեռ չի բոլորել հազարամյակը: Մինչդեռ անհայտ հազարամյակներ առաջ մեր ոսկեդեմիկ լեզվով ստեղծված ծոնը՝ Վահագնի ծննդյան մասին, կամ հինգերորդ դարի մեր պատմիչների շարադ-

րանքները ճիշտ նույն շարադասությունն ունեն, ինչ ժամանակակից հայերենինն է: Փոփոխություններ կան բառերի հոլովման ու խոնարհման համակարգում, բառերի ու բառաձևերի մեջ, բայց ոչ երբեք լեզվի շարադասության մեջ: Սիա այն, ինքը ստուգի:

Երկներ երկին,
Երկներ երկիր,
Երկներ և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ուներ զկարմրիկն եղբակի:

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,
Եւ ընդ բոցոյն վազէր խարտեաշ պատանիկի:

Կամ մի սեղմ արտահայտություն եղի-շեից. «Այդ գի կոչիս, գի բորբոքիս, գի մոնչաս ինքը ընդ քեզ»:

Մերօրյա հայը նույնը կասեր «Այդ (եղ) ի՞նչ ես գողգողում, ի՞նչ ես բորբոքվում, ի՞նչ ես մոնչում քեզուքեզ»:

Բառերի ու բառաձևերի որոշակի տարբերությամբ՝ նույն մնայուն ու անփոփոխ շարադասությունը: Իսկ թե ինչու են մեր լեզվի շարադասությունն անգամ շահարկման առարկա դարձրել, գումարվում է նրանց մյուս գաղտնիքներին:

Շարքային ու մահկանացու հայ, մի՞թե չես տեսնում, որ մեր ազգային ջոջ աղաները բռնվել են գերագույն ճշմարտություններով քեզ լուսավորելու, խավարից դուրս բերելու հիվանդությամբ: Սիա նման փայլատակումները մեկն էլ. «Ինչ վերաբերում է ընդհանրապես գրագիտությանը, ապա հիշենք, որ հայերեն գրագետ բառը իր մեջ մի հսկայական աշխարհ է պարունակում. զը-րա-գե-տ, նշանակում է գիր գիտեցող» (Պարույր Հայրիկյան):

Ինչպիսի՜ տիեզերական ճշմարտություն, ինչպիսի՜ «լուսի շող խավարի թա-

րով պահանջվում էր ռուսերենի և իրենց տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդների այբուբենները դարձնել լատինատառ: Նրանցից իմացանք, որ ազգային լեզուները վերացնելու վերաբերյալ բոլշևիկները կայացրել են մի շարք գաղտնի որոշումներ: Բայց այդ բացահայտումները կիսակատար, կես ճանապարհին են մնում, որովհետև չեն հասնում իրենց իրողություն: Նրանք անգիտա-նում են, որ ազգերի վերացման, մի միասնական լեզվով հաղորդակցվող հանրության ստեղծման ծրագիրը եղել է բոլշևիկների քաղաքականության առանցքը և մինչև ԽՍՀՄ լուծարումը ամուր ստատ է եղել ուսումնական բոլոր ծրագրերում: Նրանք անգիտանում են, որ համաշխարհային հեղափոխությունից հույսները կտրած բոլշևիկները երեսունական թվականներից որդեգրեցին Միության ժողովուրդներին ռուսացնելու քաղաքականություն՝ մի միասնական խորհրդային ժողովուրդ ստեղծելու ամպագողոց կարգախոսներով: Վերջին իրողությունը ձեռք չի տալիս մեր էլիտային, որովհետև ստիպված պետք է խոստովանեին, որ 1935 թ. ևս կարողացանք փրկել մեր այբուբենն ու լեզուն: Ինչպե՞ս խոստովանել, որ բոլորը ենթարկվեցին Մոսկվայի պարտադրանքին, բացի մեզնից ու վրացիներից. Նրանց լիովին բավարարում են քսանա-



րում ունեցող շրջանակներում գտնվեցին մարդիկ, որոնք կարողացան ճարավորեն շրջանցել լատինատառ գրության անցնելու Լենինի պարտադրանքը: Նրանք լավ գիտեին «կրոնական հաշիշ» տարածող եկեղեցու ու հոգևորականության, ինչպես նաև ռուսական «զավոն» մտավորականության մասին Լենինի սկզբունքային դիրքորոշումը: Հենց այդ հանգամանքը օգտագործելով՝ նրանք վճռական փոփոխություններ կատարեցին ռուսերենի գրահամակարգում, միանգամից այբուբենից դուրս թողեցին չորս տառ՝ որպես ապացույց հնից հրաժարվելու, որպես վկայություն, որ լեզուն ծառայեցնում են ժո-

ղովորական լայն զանգվածներին: Ճիշտ է, բուռն հակազդեցության հանդիպեց այդ ռեֆորմը, ռուս մտավորականությունն ու տպարանների աշխատողները փորձեցին բոյկոտել այն: Բանը հասավ այնտեղ, որ Պետերբուրգում գինված ծովայինները մտան տպարան, որ բռնագրավեց այբուբենից դուրս թողնված տառերը, որպեսզի այն օգտագործող չլինի (А.Е. СЫТРУН, Русский язык в советской эпохе, 1969 г.): Բայց, մի կողմից, գրահամակարգում կատարված աննախադեպ փոփոխությունները, մյուս կողմից՝ բուռն հակազդեցություն այդ ռեֆորմին, Լենինին կանգնեցրին կատարված փաստի առջև, պատճառ դարձան, որ 1918 թ. աշնանը իր իսկ ստորագրությամբ գործողության մեջ դրվի այն, որով և ռուսաց լեզուն փրկվեց լատինատառ դառնալուց:

(Շարունակելի)
Արտաշես ՀԱՎՈՐԱՆՅԱՆ

Քաղաքագետներ Արմեն Հովսեփյանի և Սիրակ Հովհաննիսյանի հեղինակությամբ, որպես ուսումնական օժանդակ ձեռնարկ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել «Քաղաքագիտության հիմունքներ» գիրքը: Մայրենի լեզվով եղած դասագրքերի և ուսումնական ձեռնարկների պակասի պայմաններում հրապարակի վրա նման ամեն մի գրքի հայտնվելը մեզանում վերածվում է երևույթի: Այդ տեսակետից ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի աջակցությամբ լույս տեսած ուսումնական այս ձեռնարկի պահանջարկված լինելը անկասկած է: Հեղինակների մտահղացմամբ ուսումնական օժանդակ ձեռնարկը նվիրված է քաղաքական գիտության տեսական ու կիրառական հիմնախնդիրներին և համառոտ պատկերա-



իր առաջին ինքնուրույն քայլերը կատարող գիտության գլխավոր թեմաները: Հաճեկան է հավելվածի ծով ձեռնարկում ներկայացված քաղաքագիտության դասականների ընտրանին՝ Պլատոնից մինչև Ֆուկույամա:

ՕԳՏԱԿԱՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՎԱԾ ՁԵՌՆԱՐԿ

ցում է տալիս հիմնարար այդ գիտաճյուղի էության ու նպատակների, հիմնական հասկացությունների, ինչպես նաև հասարակական կյանքում ունեցած նրա դերի մասին: Հատուկ ընդգծվում է, որ ձեռնարկը գրված է կրթական չափորոշիչներին և «Քաղաքագիտություն» առարկայի ծրագրային պահանջներին համապատասխան:

Ուսումնական օժանդակ ձեռնարկի կառուցվածքն ու բովանդակությունը, հարցադրումներն ու առանցքային հարցերի կապակցությամբ արված բացատրությունները հաստատում են, որ հեղինակներին հաջողվել է լուծել իրենց առջև դրված խնդիրը: Նրանք կարողացել են «սեղմագրային հակիրճությամբ» տալ քաղաքագիտության առավել կարևոր հասկացությունների, սկզբունքների իմաստը, նույն ռժով շարադրել մեզանում

Գովելի է, որ ձեռնարկի նույն մասում կա «Հայոց պատմաքաղաքական մտքի երևելիներ» բաժին, որտեղ անդրադարձ է կատարված հայ քաղաքագիտության պատմությանը՝ Փավստոս Բյուզանդից մինչև Ստեփան Հախումյան: Ձեռնարկում բավարար տեղ է հատկացված նաև ՀՀ քաղաքական մերօրյա գործընթացներին ու հիմնախնդիրներին: Վերջին հանգամանքը ձեռնարկին հաղորդում է նաև կիրառական որակներ: Հատուկ պետք է դրականորեն շեշտվի օժանդակ ձեռնարկի շարադրման լեզուն: Այն գրված է պարզ ու մատչելի, որն էլ ապահովում է օժանդակ ձեռնարկի հանրամատչելիությունը:

Ա. Հովսեփյանի և Ս. Հովհաննիսյանի «Քաղաքագիտության հիմունքները», իրոք, հաջողված օժանդակ ձեռնարկ է և կարող է օգտակար լինել ինչպես ԲՈՒՀ-երի ուսանողների ու ՁԼՄ աշխատողների, այնպես էլ ընդհանրապես քաղաքագիտության ու քաղաքական սոցիոլոգիայով հետաքրքրվողների համար:

Պետք է ավստոսալ միայն, որ նման աշխատանքը լույս է տեսել փոքր տպաքանակով:

Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ
Փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
բոլորակից անդամ

ԳՐՈՂԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ազգապահպան ճանապարհի փնտրության ժամանակն է



կերությանը նշանավոր հայագետ և մատենագիր Երվանդ Լալայանին... Այսօր նման ճակատագրով փրկված չատ ու չատ հայոց ձեռագրեր պահպանվում են Երևանի Մատենադարանում, որտեղ հաշվվում են 16 հազարից ավելի հին ու նորագույն մագաղաթ և գիր-միավոր հարստություններ...

Հայը եղել է բազմաբովանդակ ու թանկ նման գանձերի ծաղկողն ու պահպանիչը: Այն օրերից ի վեր, երբ շնորհապարզ Մեսրոպ Մաշտոցը հայերեն այբուբենը սփռեց հայոց աշխարհով մեկ, այդ ժամանակներից մեր հոգիները լցվեցին մեծագույն հարստություններով: Բյուրեք-բուրեք իմաստասեր պատմիչներն ու շնորհաշատ գրիչները հայոց գիրն ու մշակույթը հասցրին նորակատար բարձունքների, արդարաձայն սերունդներ կրթեցին պատվիրելով նրանց լինել միախոհ ու միախումբ, եղբայրագույն և գրկապինդ ուժով...

Ավաղ, այսօր հայոց անկախության դժվարական մեր ժամանակներում գիրքը կորցրել է ընթերցողին, գորավոր հայոց գիտությունը՝ գիտնական-հետազոտողին, կինոթատրոնը՝ իր երկրպագուներին... Անխորհուրդ ժողովրդապետերի լուռ ու մնջիկ թողությունը՝ սեփականաշնորհման պատրվակով, վաշխառու, թալանող... թոցնող ճարպիկները տեր են դարձել երբեմնի գեղեցկակառույց կինոթատրոնների, հարյուրավոր գրադարան-ընթերցասրահների՝ դրանք ամենուր վերածելով վաճառատեղերի և կազմինոխաղատների: Անկարելի է անտարբեր դիտել երբեմնի շեն ու գովական գրախանութները և գրադարանները, որտեղից տրցակ-տրցակ կապույտ գրքակույտերը, որպես անպետք թափոն, նոր շենքատերերը հեռացնում են... երևի՜ աղբանոց...

Մտաբերենք Հովհաննես Թումանյանի 1908 թվականին գրած «Հայոց ազգային կենտրոնական գրադարան Թիֆլիսում» հոդվածը: Մեծ բանաստեղծի երազանքն էր՝ պետականությունից և անկախությունից զրկված հայերի համար, թեկուզ հայ-

րենիքի սահմաններից հեռու, կազմակերպել ազգային թեկուզ մեկ գրադարան... Մեր օրերում, Թումանյանի մեծ բաղձանքից ավելի քան 101 տարի անց, Հայաստանում համատարած սեփականաշնորհվեցին գրադարաններն ու գրախանութները: Հայաստանի ոչ մի քաղաքում (Երևանը չհաշված) և շրջկենտրոնում ոչ մի գրախանութ չկա:

Գիրքն, ավաղ, այսօր արժեքազրկվել է... Ջուրը կժի մեջ՝ մեք, այո, ծարավ ենք (ասել է՝ հայերը դարավոր մշակույթի, ամենաընթերցող ժողովուրդներից մեկը դժվար մեր օրերում անհաղորդակից են գրքին ու մշակույթին):

Ո՞վ չի հիշում Խաչատուր Աբովյանի թախանձագին աղերսը. գնա իմ խեղճ գիրք, գնա մարդամեջ... Այսօր հայ գյուղը, նկարիչը, դերասանը (ամբողջ մտավորականությունը) զարմացած ու հուսահատ երեսը դարձրել է կառավարիչներին, թե ինչո՞ւ այս ծանրաշատ օրերին իրենց միայնակ ու անօգնական են թողել...

Մենքիկյան ասացվածք կա. «Եթե կուզես նախօրոք հաշվարկված գործը ծախողել՝ մարմիններ և հանձնախմբեր ստեղծիր...»: Մեզանում փոքրատարածք հանրապետությունում, հարյուրաշատ կուսակցությունների, հազարաշատ հասարակական կազմակերպությունների և 800-ից ավելի լրատվական միջոցների խառնակ առկայությունը անհանդուրժողական և խոտվալից, հոգեխառն մթնոլորտ է առաջացրել հասարակության մեջ և մարդկանց հասցրել խորաչափ հուսահատույթ-

յան և անբնական որոշումների: Առկա թեր ու դեմ իրողություններից, մասնավորապես սոցիալական ահեղաշունչ դրությունից ելքը փնտրելու վճռով, այո, նրանք դիմում են արտագաղթի... Այստեղ է, որ պիտի ազգովի մտաբերենք մեր գորավոր Անդրանիկի ժամանակին արդիաբար և ազգապահանջով հնչեցրած ազգանվեր խոստովանությունը. «Իմ կուսակցությունը ժողովրդիս կուսակցությունն է»: Շատ տարիներ հետո՝ Անդրանիկյան սրտաբուխ կարգախոսի տեր դարձան այսօրվա իշխանատեր այրերը: Սակայն այն ժամանակներում, հարազատ ժողովրդի վշտալից կյանքից բռնկված Անդրանիկը չարացել է Հայաստանի առաջին հանրապետության պատասխանատուների երեսին. «...Երբ գիշերները զլուխներդ բարձին կդնեք՝ քնանալու համար, մի քիչ մտածեք ձեր ազգի մասին...»:

Ռոբերտ ԿԱՐԱՅԱՆ

ԾՆՈՐ ԸՎԿՈՐԱԼՔ

Օրերս, Լոնդոնում գործող «Առաջավոր պրոֆեսիոնալների Աշխարհ-2009» կենտրոնի կողմից գրող և հրապարակախոս Ռոբերտ Կարայանին է հասցեագրվել սույն շնորհավորական նամակը.

«Հարգելի պարոն Կարայան: Մենք Ձեզ շնորհավորում ենք:

Ամեն տարի մեր կենտրոնի կողմից հազարավոր կենսագրություններ են հետազոտվում՝ առավել արժանավորներին ներառելու մեր տեղեկատվական գրքի մեջ՝ պատվավոր շքանշանով մեծադուր ու նրանց: Նմանատեսակ շքանշանը շնորհվում է այն անհատներին, ովքեր կարևոր ներդրում ունեն իրենց ազգային և միջազգային ստեղծագործական կյանքում: Դուք նրանցից մեկն եք: Դուք որպես արժանավոր պրոֆեսիոնալ՝ «Առաջավոր պրոֆեսիոնալների Աշխարհ-2009» կենտրոնի կողմից գրանցվել եք մեր ցուցակում:

Որպես «Առաջավոր պրոֆեսիոնալների Աշխարհ-2009»-ի անդամ՝ Դուք իրավունք ունեք ստանալու նվեր-շքանշանը, որը պատրաստված է բազմավորական արհեստավարների կողմից, պերզամենտի վրա...

«Առաջավոր

պրոֆեսիոնալների - Աշխարհ-2009» կենտրոն

42.000 փարի առաջ մարդը օվկիանոսային ձկներ է որսացել

Դեռևս 1.9 միլիոն տարի առաջ ծուկն իր ուրույն տեղն է ունեցել մարդու սննդակարգում: Սկզբում մարդը ծուկ է որսացել լճերում ու գետերում: Այնուհետև որոշ ժամանակ անց մարդը որոշել է ծուկ որսալ նաև օվկիանոսում: Սկիզբ է առել թունաների, շնածկների և այլ խոշոր ձկների որսը: Այս ամենի վերաբերյալ վերջին ապացույցը գտնվել է Հարավարևելյան Ասիայի East Timor կղզու պեղումների ժամանակ, որտեղ քարանձավներում թունայի և խորը ջրերի այլ ձկների մնացորդներ են հայտնաբերվել: Իր հերթին Ավստրալիայի ազգային համալսարանի պրոֆեսոր, հնագետ Սուե օ Քոնորը, օգտագործելով թվագրության սարքեր, պարզել է, որ այդ մնացորդները 42.000 տարեկան են: Ի դեպ սա համարվում էր օվկիանոսային ձկնորսության ամենախոսուն ապացույցը:



Շեքսպիրը՝ «մարմինը հասկացող գրող»

Վիլյամ Շեքսպիրի ստեղծագործությունների ընթերցումը կարող է օգնել բժշկներին լավ հասկանալու հոգեբանական խանգարումները: Նման եզրակացության է հանգել բրիտանացի բժշկ Զեննեթ Հիթոնը, որը վերլուծել է Շեքսպիրի ավելի քան 42 ստեղծագործություն՝ նկարագրելու ֆիզիկական ախտանիշները, որոնք առաջանում են ուժեղ հույզերի ժամանակ: Բժշկը պարզել է, որ մեծ դասականի գործերում հոգեւոճառիկ դրսևորումների նկարագրություններ հանդիպում են ավելի հաճախ, քան այլ գրքերում: Հատկապես նման զգայական ցնցումներից առաջացած գլխապտույտները նկարագրված են «Կամակոր կնոջ սանձահարումը», «Ռոմեո և Ջուլիետ», «Հենրիխ VI», «Ցիմբելին» և «Տրոիլ Կրեսսիա» գործերում: Շեքսպիրի մոտ հաճախ է հանդիպում նաև հոգնածության նկարագրությունը, որը վշտի ու տանջանքի արտահայտություն է: Սրանք ցայտուն երևում են «Համլետ», «Վենետիկի վաճառականը», «Ռիչարդ III» և «Հենրիխ VI» ստեղծագործություններում: Բրիտանացի բժշկ Զեննեթ Հիթոնը Շեքսպիրի ստեղծագործություններում հայտնաբերել է նաև ցրտի, մոայլ հոգեվիճակի, հիպո և հիպերտենզիայի նկարագրություններ: Եվ ամենահետաքրքրականը՝ հետազոտության հիման վրա Հիթոնը եկել է այն եզրակացության, որ Շեքսպիրը «մարմինը հասկացող գրող» է, և այդ պատճառով խորհուրդ է տվել իր գործընկերներին՝ ավելի հաճախ դիմել դասականի գործերին:

Արեգ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ իրավագիտության բաժնի մագիստրանտ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Ուշագրավ է, որ այս պատմությունը իր նմանակն ունի նաև թատրոնում, այն է՝ Իրանից հեռու, Եգիպտոսի հայ համայնքի թատերախմբերից մեկի խաղացանկում: Դա տեղի անվանի թատերական գործիչ, «Եգիպտոսիայ կոմեդիի» դերասաններից մեկի՝ Խաչիկ Սանդալյանի «Օթելլո» և Ջենոբ աղա կամ դերասան փեսացուն» կատակերգությունն է, որի առաջնախաղը կայացավ 1929 թ. սեպտեմբերին, Եգիպտոս եկած «Կոստանյան թատերախմբի» հյուրախաղերի օրերին: Ջենոբ աղան այստեղ դեմ է թատրոնին, դստերն արգելում է ամուսնանալ իր

Օհանյանի «Հաջի աղան սինեմայի դերասան» ֆիլմում, «Ամիր-Ֆիլմի» առաջին աշխատանքներից մեկում հանգեց իր դասական տարբերակին:

Այսպիսով, կարելի է ասել, որ «Հաջի աղան» սինեմայի դերասան» ժապավենը նկարահանվեց 1930-ականների ֆիլմարվեստին բնորոշ եղանակով, երբ բազմաթիվ սյուժեներ թատրոնից տեղափոխվում էին կինո: Թատրոնի դերասաններն, իրենց հերթին, ձգտում էին նկարահանվել կինոյում, այստեղ տեսնելով իրենց ունակությունները նորովի դրսևորելու լայն հնարավորություն: Իսկ 1930-ականներին, Եգիպտոսի կինոարտադրության վե-

լի ժամրին: Հոգեբանական և դրամատուրգիական զարգացումն այստեղ կատարվում է միայն պարերի միջոցով:

Այսպիսով, շարժումը, լինելով կինեմատոգրաֆի հիմնական հատկանիշը, իր ամենագեղեցիկ դրսևորումներից մեկի՝ պարի միջոցով, բացարձակացվում է, դառնալով ֆիլմարվեստի կարևոր արտահայտչամիջոցներից մեկը: Նշենք, որ Հովհաննես Օհանյանը, նույնպիսի նշանակություն տալով պարարվեստին, իր դպրոցի ծրագրում ընդգրկեց նաև «Խորեոգրաֆիա», «Արևելյան պար» և «Եվրոպական պար» առարկաները: Այսպիսով, Հովհաննես Օհանյանը, դերասանականից բացի, տիրապետելով նաև պարարվեստի հմտություններին, իր այդ ունակությունների շնորհիվ էլ մուտք գործեց կինոյի ասպարեզ: Կահիրեում նա նկարահանվեց «Աբրահամ» ժապավենում, կատարելով Փրանս Նազլիի դերը:

Այսպիսով, 1932-ին, Իրանում հաստատվելուց հետո, Ասյա Հիլինկիր-Կոստանյանը, թատրոնից բացի, կինոյում նույնպես արդեն կայացած դերասանուհի էր: Սկսնակների ուժերով ֆիլմեր նկարահանող ռեժիսորի համար նա կարող էր լինել մի իսկական հայտնություն, նրանց հանդիպումն էլ խոստումնալից համագործակցության սկիզբ: Մի հեռանկար, որը շատ շուտով կանխվեց, և Հովհաննես Օհանյանի «Հաջի աղան սինեմայի դերասան» ժապավենը, իր այս ճակատագրով էլ, մնաց իրանյան կինոարվեստի պատմության մեջ, դառնալով չկայացած հնարավորությունների խորհրդանիշ:

«...Առաջին ֆիլմի բեմադրիչ, տարիներ անց կգրի ռեժիսորին նվիրված աշխատության հեղինակ Ջամալ Օմիրը, առաջին սցենար գրող, առաջին սինեմայի դասատու և առաջին սինեմայի դերասան Օհանյանը, եթե տարբեր «եթե»-ներ չունենար իր ճամփին, իր և իր շուրջ հավաքված աշակերտների շնորհիվ մինչև ուր կարող էր հասցնել Իրանի ֆիլմարվեստը: Եթե նա բավարար հնարավորություններ ունենար, եթե ժամանակի կառավարությունը նրան օժանդակեր, եթե «Հաջի աղան...»-ը անհաջողության չմատնվեր, այսօր Իրանի ֆիլմարվեստը ի՞նչ հատկությունների տեր կարող էր լինել...»:

Սրանք հարցեր են, որոնք, տեսաբաններից բացի, հուզել են նաև այլ կինոգործիչների: Սիաթիլ ինչու, 1966-ին, երբ մուսուլմանական արդեն դարձել էր պատմություն, իսկ Իրանի ֆիլմարվեստը մուտք էր գործում միջազգային ասպարեզ, ռեժիսոր Ֆերեյդուն Ռահմաննան նկարահանեց «Սիաթիլը թախտաշարից» համար ժապավենը, որն, ըստ ամսվանի արվեստագետ Արթի Հովհաննիսյանի, նպատակ ուներ վերացնելու «համր ու խոսուն սինեմաների միջև գոյություն ունեցած բացը»:

Ժամանակի ընթացքում, ստանալով պատշաճ գնահատական, «Հաջի աղան» սինեմայի դերասան» ժապավենը, ի թիվս այլ 90 կարճամետրաժ և լիամետրաժ ֆիլմերի, 1976-ին ցուցադրվեց Թեհրանի Միջազգային հիմնադրոգր կինոփառատոնին ներկայացնելով Իրանի ֆիլմարվեստի կեսդարյա պատմությունը:

Այսպիսով, Հովհաննես Օհանյանը, լինելով իրանյան կինեմատոգրաֆի հիմնադիրը, ստեղծագործող մարդու իր նկարագրով, և, նույնիսկ անհաջողությունների օրինակով, շարունակում է ուղղորդել երկրի ֆիլմարվեստի ընթացքը: Նրա կողմից, իր արժանի տեղն ունի Ասյա Հիլինկիր-Կոստանյանը, որը, «Կոստանյան թատերախմբի» ավանդույթներին մնալով հավատարիմ, մերժեցման ուղիներ գտավ տարբեր երկրների հայ արվեստագետների համար, և, ինքն էլ, մասնագիտանալով մշակույթի այս նոր բնագավառում, ճանաչվեց որպես իրանյան կինոարվեստի առաջին դերասանուհի:

Անահիտ ՉՏԱՆ

Արվեստագիտության փեկնածու

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՀԱՆՅԱՆ, ԱՍՅԱ ՀԻԼԻՆԿԻՐ-ԿՈՍՏԱՆՅԱՆ.

ԻՐԱՆԻ ՖԻԼՄԱՐՎԵՍՏԻ ԵԽՆԱԴԻՐՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆՈՒԻՇԻՆ

ընտրյալի՝ Լևոնի հետ միայն այն պատճառով, որ նա դերասան է: Երիտասարդներին հաջողվում է փոխել Ջենոբ աղայի կարծիքը, երբ նա, «Օթելլոյի» ներկայացման ժամանակ հայտնվում է բեմում, փորձելով փրկել Օթելլո-Լևոնի ճիրաններում գտնվող իր դստերը՝ Դեզդեմոնա-Գոհարին: Ակամայից դառնալով ներկայացման մասնակից, Ջենոբ աղան համոզվում է, որ թատրոնն ունի անդիմադրելի մի ուժ, և ամեն մի պայքար այստեղ դառնում է անհմաստ:

Այսպիսով, ինչպես Հաջի աղան, այնպես էլ Ջենոբ աղան, նույն բնավորությունների տեր և նման իրավիճակում հայտնված անձնավորություններ են: Գրեթե նույն սյուժեն ավագ և կրտսեր զույգերի մասնակցությամբ, որտեղ նորի և հնի պայքարն արտահայտվում է մի դեպքում կինոյի, իսկ մյուսում՝ թատրոնի հանդեպ նրանց ունեցած վերաբերմունքով: Երկու դեպքում էլ, հերոսները հիշեցնում են Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի և Գրեմ-Սիմոնի երկերից ծանոթ կյանքի մասին սահմանափակ պատկերացումներ ունեցող պոլսահայ հարուստ վաճառականին, որը հավասարապես զավեշտական է ինչպես իր «սկզբունքայնության» դրսևորումներում, այնպես էլ դրանից հրաժարվելու պահերին: Կոստանյանուհուց հետո, Եգիպտոսի հայ թատրոնին բնորոշ կատակերգության մի տարատեսակ, հատկապես Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի «Հարշըլը Արթին աղա կամ Ֆրանկո-թրքական պատերազմ» կատակերգությունից հետո, որը նրանք գրեցին տեղի հայ թատրոնի խոստումնալից դերասան, հետագայում Արթին աղայի անգերազանցելի կատարող Լևոն Շիշմանյանի համար: Իր տարբեր դրսևորումներն ստանալով խաչիկ Սանդալյանի թատերագրությունում, այս թեման իր վերջնական արտահայտությունը գտավ նրա «Հարշըլի աղջկան ամուսնությունը» կատակերգության մեջ: Նշենք, որ Իրանի առաջին հայկական «Ամիր-Ֆիլմ» կինոստուդիան իր գործունեությունն սկսեց «Հարշըլը Արթին աղայով» (1959, ռեժիսոր՝ Արամայիս Աղամալյան), որը նույնանուն կատակերգության էկրանավորումն է: Մենք հակված ենք կարծելու, որ պոլսահայ իրականությանը բնորոշ այս թեման կարող էր Իրան թափանցել Ասյա Հիլինկիր-Կոստանյանի շնորհիվ, որն իր սկզբնական արտացոլումը գտնելով Հովհաննես



րեյի տարիներին, երբ Կահիրեյն Արաբական Արևելքի Հովիվուդի համարումն ուներ, նրանց ստեղծագործական աճի համար ստեղծվեցին առավել բարենպաստ պայմաններ: Փարավունների երկիրը գրավիչ էր նաև օտարազգի, հակապես հոլիվուդյան կինեմատոգրաֆիստների համար: Նույն Սեսիլ ղը Միլլը իր ֆիլմերը նկարահանել է նաև Եգիպտոսում, Գիզայի բուրգերի ստորոտում:

Այսպիսով, կինոն, դառնալով գործունեության ևս մեկ ասպարեզ ոչ միայն երկրի, այլև Եգիպտոսի դերասանների համար, նոր հեռանկարներ ստեղծեց նաև այստեղ հյուրախաղերի եկած արվեստագետների համար: «Կոստանյան թատերախմբի» դերասանուհի Ասյա Հիլինկիր-Կոստանյանը, կինոյից բացի, հրապուրվելով նաև երաժշտական ավանդույթներով հարուստ տեղի թատերական կյանքով, վերջնականապես կայացավ իբրև օպերետի դերասանուհի: Այստեղ էր, որ նա, միանալով տեղի ճանաչված պարուհի, դերասանուհի և թատերագիր Ժենյա Արիստակյան-Պոլսկինային, ստեղծեց օպերետային իր խումբը: Ունենալով նաև ռեժիսորական հակումներ, Ասյա Կոստանյանը բեմադրեց Իմրե Կալմանի «Սիլվա» օպերետը, արժանանալով ինչպես հայ, այնպես էլ օտարազգի, հատկապես ռուս համայնքի թատերասերների ջերմ ընդունելությանը: Նրա վաղը դարձավ հիացմունքի առարկա, և, հետագայում, հաստատվելով Իրանում, գեղեցիկ պարերի, շքեղ բեմանկարչության և զգեստների սիրահարները գալիս էին թատրոն, հատկապես Ասյա Կոստանյանին տեսնելու համար: Իր այս նկարագրով էլ դերասանուհին ավելի քան համապատասխանում էր անցյալ դարի 30-ականների ֆիլմարվեստի պահանջներին: Օպերետը և մյուզիքլը թատրոնից տեղափոխվում էին կինո, ճանապարհի հարթելով մի նոր՝ երաժշտական ժանրի ստեղծման համար: Ավելին, միայն երաժշտական ռեվյուների հայտնվելուց հետո էր, որ համր կինոն վերջնականապես դուրս մղվեց կինոասպարեզից: Այստեղ պարը, դադարելով գործողության սոսկ հավելումը լինելուց, ստացավ առանցքային նշանակություն: Ինձ, առաջին հերթին, հետաքրքրում էր ինքը՝ պարը, և, հետո միայն՝ գործողությունները, ասել է Ռուբեն Մամուլյանը, թատրոնից հետո, կինոյում նույնպես հանգելով մյուզիք-

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Պատմաբանասիրական համդեմ»-2

Ընթերցողի ուշադրությանն ու դատին է հայտնված «Պատմաբանասիրական համդեմ»-ի 2011 թվականի 2-րդ համարը, որի նյութերը մեր կարծիքով, և՛ բովանդակությամբ, և՛ բազմազանությամբ ու մանավանդ՝ գիտական մակարդակով անպայման հետաքրքիր են, ընթերցելի և ունեն ասելիք:

Հանդեսը բացվում է Արարատ Հակոբյանի «1921 թ. փետրվարյան իրադարձությունները՝ «կարմիրների» և ապստամբների զինուժի մասին հայ պատմագրության մեջ» հրապարակումով: Հայտնի է, որ սույն իրադարձության վերաբերյալ ստեղծված է պատմահուշագրական, գիտական, վավերագիր և այլ գրականություն: Գնահատականները հաճախ իրարամերժ են, տարաբ-

նույթ, երբեմն՝ կողմնակալ:

Այնպես որ ընթերցողին է թողնված որոշել սույն հրապարակման անկողմնակալության և ասելիքի գնահատականը:

Հարություն Մարությանը հետաքրքիր ուսումնասիրություն է ներկայացրել «Հայոց ցեղասպանության և հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» խորագրով: Թեման այժմեական է, հետաքրքիր և անպայման օգտակար:

Հայկ Մելիք-Աղամալյանի ռուսաստանցի երկրաբանների հետազոտությունները Արևմտյան Հայաստանում 1917 թ. ամռանը հրապարակումը (ռուսերեն) ուշագրավ տեղեկատվություն է, պատմության մի դրվագ, որի իմանալը և օգտակար է, և հետաքրքիր: «Թիֆլիսի բանաստեղծների համաբար-

ության գործունեությունը» ուսումնասիրության (ռուսերեն) հեղինակ Անուշավան Ջաքարյանը ծանրակշիռ հետազոտություն է ներկայացրել Թիֆլիսում գործած «Բանաստեղծների համաբարություն» գրական միավորման մասին, որի նախաձեռնողը ռուս բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին էր: Անչափ ուշագրավ թեմա, հարուստ, նորահայտ տեղեկատվություն, որին ծանոթ լինելու համար խորհուրդ ենք տալիս անպայման կարդալ:

Ուշադրության է արժանի Ռուզան Սարգսյանի Թիֆլիսի հայ բարեգործների (XIX դ. երկրորդ կեսին) հրապարակումը, որում ուշագրավ և նորահայտ մանրամասներով ուրվագծվում է հայ ճշմարիտ բարեգործների կերպարը: Սույն հետազոտությունը կհանձնարարենք մերօրյա միլիոնատեր-օլիգարխներին: Գուցե ինչ-որ բան սովորեն:



Տեղի սղության պատճառով մենք հնարավորություն չունենք անդրադառնալու համդեմի բոլոր հրապարակումներին: Թեմա դրա կարիքն էլ չկա, քանի որ արդյունավետ և հետաքրքիր ամբողջ հանդեսը ընթերցելն է, որտեղ տեղ գտած նյութերի միայն վերնագրերն անգամ հուշում և հորդորում են՝ կարդալ: Որովհետև անչափ հետաքրքիր են, բովանդակալից, հարուստ՝ տեղեկատվությամբ, նոր փաստերով և հայտնություններով:

Կկիրառվե՞ն արդյոք բնական ցեղիտները անասնակների մեջ (առաջարկություն ՀՀ կառավարությանը)

Հայաստանում դեռևս 1972թ. հայտնաբերվել է բնական ցեղիտների (Նոյեմբերյանի շրջան) խոշորագույն հանքավայր, որի Նոր Կողբի տեղամասում, մի փոքրիկ տարածքում, կատարվել է մանրազնի հետախուզական աշխատանք և գնահատվել է բնական ցեղիտների 13,8 մլն տ պաշար: Մինչ հանքավայրում մանրազնի հետախուզական աշխատանքների սկիզբը, կատարվող նախնական փուլի հետազոտություններով պարզվել է, որ Նոյեմբերյանի ցեղիտները պիտանի են:

1. կատալիզատորներ և դրանց կրողներ պատրաստելու համար,
2. որպես արտոբեռներ մալթամբերքների մաքրման համար,
3. ցեղիտների, ռոբիդիումի, լիթիումի, կալիումի և մի



քանի ծանր մետաղների ընտրովի տարանջատման համար,

4. որպես հողի կառուցվածքը բարելավող և բերքատվությունը բարձրացնող նյութ, որը միևնույն ժամանակ հողից կլանում է ռադիոակտիվ ստորոցիումը և ցեզիումը, ինչպես նաև մի շարք ծանր մետաղների գերակշիռ մասը՝ արգելակելով դրանց թափանցումը բույսի մեջ, հետևապես և մարդու օրգանիզմ,

5. կարբամիդային խտանյութի (անասնակների) պատրաստման համար,

6. որպես արտոբեռներ բնական այրվող գազերի չորացման համար,

7. արդյունաբերություններից հեռացող գազերից թթու տարրերը (SO_2 , SO_3 , CO_2 և այլն) որսալու համար,

8. սինթետիկ մաքրող նյութեր պատրաստելու համար,

9. այլ տիպի (ավելի կարևոր և արժեքավոր) ցեղիտներ (ֆոսֆատ, շաքար, նատրիումական մորոգենիտ և այլն) սինթեզելու համար,

10. հոսքաջրերի մաքրման և խմելու համար պիտանի դարձնելու համար,

11. ատոմական էլեկտրակայաններից հեռացող ջրերից ռադիոակտիվ թափոնները որսալու համար և այլն:

Բնական ցեղիտները, հատկապես կլինոպտիլոլիտ հանքանյութը իրենց յուրահատուկ կառուցվածքի և դրա հետ էլ կապված կլանող և մաքրող ունակությունների շնորհիվ շատ շուտով մեծ ճանաչում գտան երկիր մոլորակի մի քանի տասնյակ երկրների կողմից, որոնք էլ վաղուց ի վեր (անցյալ դարի 60-70-ականներին) կիրառում են այդ ցեղիտներն ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ: Հայաստանն այս գործում բավականին հետ է մնում, չնայած նրան, որ 1982 և 1983 թվականներին Հայկական ԽՍՀ նախարարների խորհուրդը երկու որոշումներով (18 փետրվարի 1982 թ., N 97 և 14 սեպտեմբերի 1983 թ. N 548) ուղղագծել է բնական ցեղիտների կիրառության հիմնական ուղղությունները Հայաստանում, և պարտավորեցրել է համապատասխան նախարարություններին՝ հետախուզել և ներդնել բնական ցեղիտները արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ:

1983 թվականի N 548 որոշումով Հայաստանում բնական ցեղիտների կիրառության հիմնական ուղղություններ են ճանաչվել:

1. բնական ցեղիտների կիրառությունը, որպես հավելում խոշոր եղջերավոր կենդանիների, խոզերի և թռչունների կերաբաժնում,

2. բնական ցեղիտների կիրառությունը՝ հոսքաջրերի մաքրման համար և, երևանի աերացիայի կայանի նստվածքների մշակման արհեստական հողաշերտ (ռոչա) ստեղծելու գործում որպես կատիոնատ,

3. բնական ցեղիտների հիմնական հենքի վրա դրանց սինթետիկ նմանակների ստեղծում, ցեղիտների ներդրումը սինթետիկ լվացող նյութերի ստացման, գազերի, հեղուկների և յուղերի մաքրման և չորացման գործում, ինչպես նաև մոլեկուլայր մաղերի լայն տեսականու ստացման փորձարարական արտադրության կազմա-

կերպում՝ կատալիզատորների և լցանյութերի համար:

Ինչպես տեսնում ենք, Հայկական ԽՍՀ նախարարների խորհուրդը բնական ցեղիտների կիրառության առաջին պլանի վրա էր դրել դրանց կիրառությունը որպես հավելում անասնակների մեջ: Ահա ինչու մենք այժմ կխոսենք այդ գործում բնական ցեղիտների կիրառության արդյունավետության մասին:

Նոյեմբերյանի հանքավայրում բնական ցեղիտները ներկայացված են հանքանյութային տարատեսակ կազմերով՝ անալցիմով, մորոգենիտով և կլինոպտիլոլիտով, որոնցից արդյունաբերական նշանակություն ունեն վերջին երկուսը: Ցեղիտները ներկայացված են շերտային մարմիններով, որոնք հերթափոխվում են կրաքարերի և բենթոնիտային կավերի շերտերով: Վերջիններս էլ ներկայացված են ինչպես անջատ, համարյա միահանգանյութային շերտերով, այնպես էլ ցեղիտների (կլինոպտիլոլիտի) հետ խառը՝ միևնույն շերտի տարածքում և ցեղիտների հետ ունեն տարբեր քանակային հարաբերություն՝ 10-ից մինչև 90%:

Անասնակներին, որպես հավելում, Հայաստանի (Նոյեմբերյանի) հանքավայրի բնական ցեղիտներն առաջին անգամ փորձարկվել են ՈՂ Մոսկվայի հազվագյուտ տարրերի հանքաբանության, բյուրեղաքիմիայի և երկրաքիմիայի գիտահետազոտական ինստիտուտում 1972-1973 թվականներին, իսկ հետո՝ միահանգանյութային ցեղիտային, այնպես էլ խառը՝ ցեղիտ-բենթոնիտային տարատեսակները ՈՂ Վորոնեժ քաղաքում փորձարկվել են կարբամիդային խտանյութի՝ անասնակներ պատրաստելու գործում: Նախօրոք նշենք, որ բոլոր փորձարկումներն էլ տվել են միանգամայն դրական արդյունքներ:

Խոճկորների համար նախատեսված սպիտակուցային կերին սովորաբար ավելացվում է 10% չգերազանցող ցեղիտ (կլինոպտիլոլիտ), որը զգալիորեն նպաստում է կենդանիների քաշի աճին: Հայտնի են դեպքեր, երբ անասնակներին 5% քանակությամբ կլինոպտիլոլիտ ավելացնելիս 11 շաբաթվա ընթացքում փորձակենդանիների քաշը ստուգվող խմբի համեմատ աճել է 16-ով: Համեմատելով ՀՀ Նոյեմբերյանի, Աղբերջանի Սյ-Դաղի և Թուրքմենիայի Բաղխիզի հանքավայրերի կլինոպտիլոլիտի խթանիչ ազդեցությունը խոզերի աճի վրա, պարզվել է, որ անասնակներին մինչև 5% կլինոպտիլոլիտ ավելացնելիս փորձակենդանիների քաշն աճում է հետևյալ քանակներով.

- Նոյեմբերյանի հանքավայրի կլինոպտիլոլիտ ավելացնելիս՝ 20-23%,

- Սյ-Դաղի և Բաղխիզի հանքավայրերի՝ 9-16%:

Նոյեմբերյանի հանքավայրի ցեղիտները (Նոր Կողբի տեղամասի) փորձարկվել են նաև խոշոր եղջերավոր կենդանիների վրա: Հայաստանի Արմյանի շրջանի «Արուսյան» տնտեսությունում կատարված փորձերով հաստատվել է, որ կթու կովերի օրաբաժնում կլինոպտիլոլիտի օգտագործումը (յուրաքանչյուր գլխի համար օրը 90գ) նպաստում է կաթնատվության բարձրացմանը 6,6-8,7 տոկոսով: Բացի այդ, անասնակներին կլինոպտիլոլիտի հավելումը կենդանիներին ազատում է (բուժում է) քորից, ժանտախտից և այլ հիվանդություններից, որոնք հաճախ խիստ անհանգստացնում են մատղաշին, հատկապես մորից կտրվելու առաջին շրջանում:

Մենք արդեն իսկ նշել ենք, որ լավագույն արդյունք ստացվում է անասնակներին 5 տոկոսի չափով ցեղիտ հավելելիս, սակայն «Արուսյան» տնտեսությունում, մեզ համար անհասկանալի պատճառներով, ցեղիտի քանակը խոշոր եղջերավոր կենդանիների կերաբաժնում կազմել է յուրաքանչյուր գլխի համար ընդամենը 90գ, որը լավագույն չափաքանակից՝ 5 տոկոսից, փոքր է մի քանի անգամ: Համոզված ենք, որ լավագույն չափաքանակով ցեղիտ հավելելիս կովերի կաթնատվությունը կարող էր աճել ոչ թե 6,6-8,8 տոկոսի չափով, այլ առնվազն 15-18 տոկոսի չափով:

Դրա լավագույն ապացույցն են հետազայում երգողվետ ինստիտուտի կողմից կատարված հետազոտությունները:

Երգողվետ ինստիտուտի գիտնականների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքով պարզվել է, որ կթու կովերի կերաբաժնում օրական կերի 5 տոկոսի չափով Նոյեմբերյանի բնական ցեղիտ հավելելու պարագայում միջին կաթնատվությունն աճում է 12,5 տոկոսով:

Խոշոր եղջերավոր կենդանիներին ցեղիտային հավելում (կերի 5% չափով) պարունակող կերով կերակրելիս կենդանիների քաշի աճը կազմել է 16-20%:

Նշենք, որ նախկին ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններում կատարված հետազոտություններով հաստատվել է, որ բնական ցեղիտները անասնապահության և թռչնաբուծության մեջ կիրառելիս (հավելին, ճտերին, խոզերին և խոշոր եղջերավոր կենդանիներին ցեղիտով

պատրաստված կերով կերակրելիս) ստացվում է զգալի տնտեսական արդյունք: Այսպես, մեկ տ ցեղիտից ստացած տնտեսական արդյունքը կազմել է.

ճտերի աճեցման համար 623 դոլար,
ծվատու հավերին կերակրելիս՝ 15901 դոլար,
խոշոր եղջերավոր կենդանիներին կերակրելիս՝ 705 դոլար,

խոզերին կերակրելիս՝ 459 դոլար:

Մինչ բնական ցեղիտների արդյունաբերական նշանակության հանքավայրերի հայտնաբերումը, անասնապահության գործում կիրառվում էին բարձրորակ բենթոնիտային կավեր, որոնք հազվադեպ հանդիպող և խիստ կարևոր հումք են արդյունաբերության զանազան ճյուղերի համար: Բնական ցեղիտներն ու ցեղիտ-բենթոնիտային տարատեսակներն ամբողջությամբ փոխարինում են բարձրորակ ավալային տիպի, բենթոնիտներին և տալիս են ավելի բարձր տնտեսական արդյունք:

Ցեղիտների կիրառությունը ոչ միայն բարձրացնում է կենդանիների մատվությունն ու կաթնատվությունը, այլև բարելավում է կաթի և մսի որակը:

Ընթերցողների մոտ կարող է առաջանալ մի շատ բնական հարց՝ ի՞նչ են կատարում բնական ցեղիտները կենդանիների օրգանիզմում, որ այդպիսի լավ արդյունքներ են ստացվում: Պատասխանենք.

առաջինը՝ ցեղիտների բյուրեղային ցանցում առկա են ծակոտիներ (մասնագետները դրանց անվանում են պատուհաններ), որոնց մեջ տեղադրված են կալիումի, կալցիումի, նատրիումի և մագնեզիումի կատիոններ: Ցեղիտները կենդանիներին են տալիս միկրոքանակներով կատիոններ, որի հետևանքով էլ ծակոտիները (պատուհանները) ազատվում են դրանցից,

երկրորդը՝ ցեղիտները կլանում են կենդանու օրգանիզմից կլանում են կերի հետ թափանցած ծանր մետաղներն ու ռադիոակտիվ տարրերը և դուրս բերում դրանք կենդանու օրգանիզմից,

երրորդը՝ ցեղիտները կլանում են կենդանու մարսողության ընթացքում առաջացող գազերը և դուրս բերում դրանք:

Այս բոլորի արդյունքում կենդանիներն ազատվում են թունավոր ու խիստ վտանգավոր ծանր մետաղներից, ռադիոակտիվ տարրերից և գազերից, արգելակում են դրանց թափանցմանը արյան մեջ, կենդանիներին ազատում են թունավորումներից, այլ հիվանդություններից և նպաստում են կենդանիների նորմալ աճին:

Վերջերս ՀՀ գյուղատնտեսության փոխնախարարն ի լուր ամենքի հայտարարեց, որ Հայաստանում զգալի քանակներով ավելացել է խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարների գլխաքանակը: Սա շատ ուրախալի երևույթ է: Դրա հետ մեկտեղ ուրախալի կլինի, եթե թեկուզ 8-10 տոկոսով էլ ավելացվի կենդանիներից յուրաքանչյուրի կենդանի քաշը՝ մատվությունը և 7-8% էլ՝ կաթնատվությունը: Շատ ուրախալի կլինի նաև, եթե ՀՀ-ում աճեցվող խոզերից յուրաքանչյուրի մատվությունն էլ ավելացվի, եթե ոչ 20-23 տոկոսով, ապա զոնեն 10-12 տոկոսով:

Այս տվյալները հիմք ունենալով և գիտենալով մեր հանրապետության խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի գլխաքանակը, ՀՀ գյուղատնտեսության դեկավարները հեշտությամբ կարող են հաշվել ցեղիտների



կիրառության պարագայում ավելացվող մսի և կաթի քանակները: Միևնույն ժամանակ, որպեսզի այդ նախարարությունից ոչ մեկը, ոչ մի փոխնախարար չգրի, թե «ցեղիտի մեկ տոննան արժե 120 դոլար», խորհուրդ կտանք, որպեսզի գյուղնախարարությունը ունենա ցեղիտների իր սեփական հանքավայրը (Նոյեմբերյանի հանքավայրի տեղամասերից մեկը կամ հետախուզված տեղամասի արևմտյան թևը), որի ընդերքից արդյունահանված ցեղիտի կամ ցեղիտ-բենթոնիտային տարատեսակի մեկ տոննայի ինքնարժեքը կկազմի ոչ ավելի 10 դոլարից: Սա առաջինը: Երկրորդ հարցն էլ այն է, թե՞ ինչու՞ Նոյեմբերյանի հանքավայրի Նոր Կողբի հետախուզված տեղամասը տրվել է անհատ ձեռներեցների ձեռքը, այն էլ այն պարագայում, երբ Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի (նախագահ Ֆադեյ Սարգսյան) որոշմամբ այդ տեղամասը հետախուզվել է զուտ գյուղատնտեսության կարիքները բավարարելու համար (միայն և միայն անասնակներին որպես հավելում): Սակայն, ցավոք, այս նպատակի համար հետախուզված ցեղիտներից և ոչ մի կիլոգրամ մինչ այժմ չի օգտագործվել:

Եվ... բնական հարցադրում՝ կկիրառվե՞ն արդյոք մեր հոյակապ ցեղիտներն ու ցեղիտ-բենթոնիտները այս հույժ կարևոր նպատակի համար:

Հրայր ԿԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱՄ Մ.Զորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր

Վիրխարի օգոնային «անցք» Արկտիկայի վրա

Երկրագնդի օգոնային շերտում առաջին անգամ վիրխարի «անցք» է գոյացել Արկտիկայի վրա: Natura համադեպի վերջին համարում գիտնականների միջազգային հետազոտական խմբի մասնակիցները հայտնում են, որ գոյացել է մոտ 2 մլն քառ. կմ մակերեսով օգոնային «անցք», որի միջով Երկիր է հասնում Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթումը:

Արկտիկայի վրա «անցքը» գոյացել է փետրվար-մարտին և տեղաշարժվել է Դյուսիսային Կանադայի, Դյուսիսային Եվրոպայի, Կենտրոնական Ռուսաստանի և

Դյուսիսարևելյան Ասիայի վրայով, հաղորդում է ԻՏՄՈՒ-ՏՄՄՍ-ը:

Դրա ծագումը հավանաբար կապված է ընդհանուր կլիմայական փոփոխությունների և քլոր պարունակող արդյունաբերական արտանետումների հետ, որոնք Երկրից 20-30 կմ բարձրության մեջ ազդում են մթնոլորտի վերին շերտերի վրա:

«Կանոնավոր դիտարկումների սկզբից ի վեր առաջին անգամ 2011-ի առաջին կիսամյակում Արկտիկայի վրա օգոնային շերտերի քայքայման ծավալները համադրելի են Ամերիկայի վրա

օգոնային «անցքի» ծավալների հետ», - նշվում է գիտնականների զեկուցագրում:

Մթնոլորտի վերին շերտերում օգոնի պարունակության վերաբերյալ տվյալներ հավաքելիս հետազոտողներն օգտագործել են ամերիկյան և եվրոպական օդերևութաբանական արբանյակների, ինչպես նաև կանադական բևեռային կայաններից արձակված օդերևութաբանական զոնդերի տվյալները:

Գիտնականներն ընդգծում են, որ ամերիկայից է հնարավորինս ամբողջական գիտական տեղեկություններ հավաքել Արկտիկայի վրայի օգոնային «անցքի» չափերը և դրա ծագման հնարավոր հետևանքները ճշգրտորեն գնահատելու համար:

Ի՞նչ ենք շնչում

Անցյալ տարի մեզանից յուրաքանչյուր շնչել է 30 կգ վնասակար նյութեր:

ՄԱԿ-ի օդերևութաբանության համաշխարհային կազմակերպությունը իր ամենամյա զեկուցում ահազանգում է, որ դեպի մթնոլորտ ջերմոցային գազերի արտանետումները հասել են ռեկորդային քանակի: Վնասակար նյութերով օդի աղտոտվելու արագությունը գերազանցում է վերջին 10 տարվա միջին արագությանը: Միջազգային էներգետիկ գործակալության փոխանցմամբ էլ մթնոլորտում ածխածնի երկօքսիդի, մեթանի, ազոտի օքսիդի կուտակումները ավելացել են համապատասխանաբար 38, 158 և 20 տոկոսով: Ըստ գործակալության՝ օդի աղտոտվածության գլխավոր պատճառը մեքենաների թվի հսկայական աճն է, և դրա դեմ անկարող են պայքարել պետությունները:



ԶԼՍ-ներում բազմիցս խոսվել է հանրապետությունում օդի աղտոտվածության մասին: Երևանում վերջին տարիներին օդի աղտոտվածությունը մի քանի անգամ գերազանցում է նորման: Մայրաքաղաքի օդի մոնիտորինգի ստացիոնար դիտարկումները պարզել են, որ մայրաքաղաքի Կենտրոն և Շենգավիթ համայնքներն ամենակեղտոտվածներն են: Այդ համայնքներում բարձր են հատկապես փոշու և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի սահմանային թույլատրելի նորման գերազանցվել է 2.4, գետնամերձ օգոնինը՝ 1.7 անգամ: Փոշու միանվագ առավելագույն կոնցենտրացիայի թույլատրելի նորման գերազանցել է 3.5 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 5:

Ազգային վիճակագրական ծառայության փոխանցմամբ՝ 2010-ին մթնոլորտային արտանետումները երկրում կազմել են 263.9 հազար տոննա, որի 63 տոկոսը՝ տրանսպորտից, իսկ 36.9 տոկոսը՝ արտանետման անշարժ աղբյուրներից: Ըստ վերլուծության Դայաստանում մեկ բնակչի հաշվով արտանետումները կազմել են 30 կգ: Մթնոլորտն արտանետված վնասակար նյութերի կազմում են ածխածնի և ազոտի օքսիդներն ու ծծմբային անհիդրիդը:

Հ. Հ.

Վտանգավոր գրածո Արկտիկայի արևելքում

Արկտիկայի արևելյան մասում գիտնականները կատարել են վտանգավոր հայտնագործություն: Ռուս-ամերիկյան արշավախմբի մասնակիցները այնտեղ հայտնաբերել են պնդացած մեթանի հսկայական հանքաշերտեր: Այդ գազը, անցնելով օվկիանոսային ջրի հաստ շերտի միջոցով, հայտնվում է մթնոլորտում և, մասնազետների կարծիքով, կարող է հանգեցնել Երկրի կլիմայի ընդհանուր ջերմացմանը:

«Մենք հայտնաբերել ենք մեթանի արտանետման նոր դաշտեր: Ամենամեծ շատրվանի հատույթը մեկ կիլոմետրից ավելի է: Դա աներևակայելի չափ է: Ենթադրյալ պաշարների 1-2 տոկոսի արտանետման դեպքում մթնոլորտային մեթանի ներկայիս խտությունը կարող է բազմակի աճել, ինչը կհանգեցնի անկանխատեսելի հետևանքների»,- ՌԻԱ գործակալությանը տված հարցազրույցում ասում է արշավախմբի պետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր Իգոր Սեմիլետովը:

Գիտնականները պնդում են, որ արդեն այժմ Արկտիկայում դիտվում են ընդհանուր ջերմացման նշաններ: Օրինակ, վերջերս կտրուկ ավելացել է փոթորկոտ օրերի քանակը, իսկ ջրի ջերմաստիճանը ամսովոր բարձր է տարվա այս ժամանակվա համար: Բացի դրանից, դանդաղել է սառցազոյացումը:



Սխալորեն ընդհատ արդի կաթվաթի

ԱՄՆ-ի եմորի համալսարանի բժիկ-գիտնականները ապացուցել են, որ սխալորեն լավագույն միջոց է սրտի հիվանդությունների դեմ: Գիտնականների հիմնավորմամբ սխալորեն պարունակում է դիալիլ-եռսուլֆիդ, որը կանխում է սրտի հյուսվածքների քայքայումը, ինչը հանգեցնում է սրտի կաթվաթին:

Փորձի ժամանակ նրանք մոտ 45 ռոպեով արգելափակել են առնետների արյուն-կորոնար զարկերակները՝ հրահրելով սրտի կաթված: Այնուհետև բժիշկները ամեն օր առնետներին ներարկել են դիալիլ-եռսուլֆիդ: Այն կրծողները, որոնք այդ ներարկումը ստացել են արյան շրջանառությունից զրկված սրտամկանի շրջանում, նկատվել է ապաքինում (61 %) ի տարբերություն առնետների այն խմբի, որոնք ներարկում չեն ստացել:

Դիալիլ-եռսուլֆիդը արտադրում է ծծմբաջրածին, որը ցածր խտությունների դեպքում կարող է պաշտպանել սրտամկանի հյուսվածքները: Բժիշկ-գիտնականները, հրաժարվելով ներարկումներից օգտագործել են դիալիլ-եռսուլֆիդ, որպեսզի սրտին մատակարարեն անկայուն և փոփոխվող ծծմբաջրածին:

Հետազոտության հաշվետվությունը գիտնականները պատրաստվում են ներկայացնել Ֆլորիդա նահանգի Օռլանդո քաղաքում տեղի ունենալիք ամերիկյան սրտաբանական ասոցիացիայի ամենամյա նստաշրջանի ժամանակ:



- Ես սիրով կկարեմ ձեր կոստյումը, միայն թե դրա համար մեկ ամիս է պետք:

- Ամբողջ մեկ ամիս, - զարմացավ պատվիրատուն: Աստված ընդամենը 6 օրում արարեց ողջ աշխարհը:

- Արարիչը արարեց, բայց մի նայեք, թե ինչ տեսք ունի այդ աշխարհը, - հակադարձեց դերձակը:

Սիրահար զույգը մտնում է ռեստորան՝ ճաշելու: Մոռացած մատուցողին, նրանք ակնդետ նայում էին իրար աչքերի մեջ: Վերջապես տղան շշմեց.

- Ինչ քաղցր ես դու, հաճույքով կուտեի քեզ:

- Ես էլ քեզ կուտեի: Մատուցողը լսելով նրանց, հազալով ընդհատեց սիրահարների զեղումները և հարցրեց.

- Ներեցեք, իսկ ի՞նչ եք խմելու:

Պարզել Պիկասոն ժամանեց Լոնդոն: Մինչ դիմավորողները կմոտենային, ինչ-որ մեկը թոցրեց նրա ժամացույցը:

- Դուք որևէ մեկին կասկածո՞ւմ եք, - հարցրեց ոստիկանության տեսուչը:

- Ես հիշում եմ մեկին, որ օգնում էր ինձ վազոնի աստիճաններից իջնելիս:

- Պարոն Պիկասո, դուք նշանավոր նկարիչ եք, նեղություն քաշեք և պատկերեք նրա դիմանկարը:

Երեկոյան Պիկասոյի նկարած դիմանկարով Լոնդոնի ոստիկանությունը զորության կասկածով ձերբակալել էր երեք ծերունու, երկու պառավի, երկու տրուբյուս և չորս վագրի մեքենա:

Գնացքի վազոնախցում ուղևորներից մեկը ասում է մյուսին.

- Գիտե՞ք, իմ կինը ուղղակի հրեշտակ է:

- Երջանիկ մարդ եք, իսկ իմ կինը դեռ կենդանի է:

Հեռախոսի զանգ.

- «Հիշողություն» ընկերությունը լսում է:

- Ձեզ հետ խոսում է Ռաբինովիչը: Ասացեք, խնդրեմ, ճի՞շտ է, որ ասում են հրեաները ծախսեցին Ռուսաստանը:

- Այո, այո, ծախսեցին, ջիդդի մուս, էլ ի՞նչ եք ուզում:

- Ես ուզում էի իմանալ, թե որտե՞ղ կարող եմ ստանալ իմ բաժինը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղի համար

1. Գիտաշխատող՝ Շրջակա միջավայրի երկրաբանի լաբորատորիայում՝ 1 հաստիք:

Ամերիկայի փաստաթղթերը հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան, Արմավան 68, ՀՀ ԳԱԱ Էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոն, հեռ.՝ 57-29-24:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24ր,
հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268,
գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է ԳԱԿԱՐՈՒՄԻՆ՝
21. 12վ. 2011 թ.:

"ГИТУЮН" ("Hayka") gazeta HAH PA

Սպեղծվել է նիհարեցնող ծամոն

Իտալիայում ստեղծվել է ախորժակը փակող ծամոն: Կենսաքիմիկոս Ռոբերտ Դոյլի կատարած հետազոտության արդյունքում պարզվել է, որ ախորժակը և մնացած այլ կարևոր էներգետիկ պրոցեսները, որոնք ընթանում են մարդու օրգանիզմում, կարգավորում է հատուկ պեպտիդ-բիոգեն (PYY) հորմոնը, որի քանակից է կախված մարդու հագեցվածության զգացումը:

Մասնագետները կարծում են, որ արյան մեջ PYY մակարդակն աճում է կալորիաների օգտագործման քանակներից զուգընթաց: Սակայն արի տես, որ գեր մարդկանց մոտ այն հաճախ գտնվում է ցածր խտությամբ, որի պատճառով էլ նրանք մշտապես ունեն քաղցի զգացում:

Գիտնականները կարծում են, որ ախորժակը կարգավորելու համար բավական է միայն արյան մեջ ավելացնել վերոնշյալ հորմոնի քանակը: Նորությամբ կարևոր է, քանի որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ահազանգում է աշխարհում նկատվող գիղացման համաճարակի մասին: